ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ՕԳՈՍՏԱՓԸՌ ԿԱՅՍԵՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ.

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Կայսրուհին և ես շնորհ ունիմք զՁեզ սրտագինս՝ յաղագս աղօթից Ձերոց և բարեմաղթութեանց:

Նիկոլայ:

Շնորհաւորական Նորին Սրբութեան Վեհ. Հայրապետի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ.

Ի Մեծահանդէս աւուրս տարեդարձի Սրբազան թագաւորութեան Ձերդ Կայսերական Մեծութեան և Ամենաբարեպաշտ Թագուհւոյ, համայն միաբանական ուխտիս ի Մայր Տաճարիս առաջի Ս. Սեղանոյ Իջման Միածնի, վերառաքեցի զաղօթս ջերմագինս յաղագս քաջողջութեան և երկարակեցութեան Ձերդ Մեծութեան: Երկարեսցէ Տէր զաւուրս Ձեր ի փառս և յերջանկութիւն Մեծին Ռուսիոյ:

Մկրտիչ Կաթուղիկոս ամենայն Հայոց:

ԲԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Հայրապետական Ցնծրէնութիւնք:

Կոնդակ յանուն Թեմակ. Ատրպատականի Տ. Ծղիշէ Ծ. վարդապետի, որով արտօնեցաւ՝ թոյլատրել Գրիգորի Յովհաննիսեան Հախվերան գեղջ Սալմասայ մուտանել յերկրորդ ամուսնութիւն. թ. 24: